

«Հ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 27/4

29 մայիսի 2013թ.

Քննարկվեց «Հիդեր Կարապետյան» ՍՊԸ դիմումով բերված բողոքը «Հ ԿԱ ՊԵԿ Վանաձորի ՏՀՏ 05.04.2013թ. թիվ 2114724 ստուգման ակտի դեմ:

Համաձայն «Հ ԿԱ ՊԵԿ Վանաձորի ՏՀՏ պետի 20.03.2013թ. թիվ 2114724 հանձնարարագրի, «Հ օրենսդրությամբ հարկային մարմինն վերապահված իրավասության սահմաններում «Հիդեր Կարապետյան» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է օրենքով սահմանված ելակետային տվյալների և գործակիցների ճշտության ստուգում, որն ընդգրկել է 01.04.2012թ-ից մինչև ստուգման ավարտն ընկած ժամանակաշրջանը: Արդյունքում կազմվել է Վանաձորի ՏՀՏ 05.04.2013թ. թիվ 2114724 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 2.576.520 դրամ:

«Հիդեր Կարապետյան» ՍՊԸ բողոքում մասնավորապես նշված է.

Իրականացված վարչական վարույթի ընթացքում խախտվել են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» «Հ օրենքի (այսուհետ նաև Օրենք) այնպիսի հիմնարար սկզբունքներ, ինչպիսիք են՝ Օրենքի 4-րդ հոդվածով սահմանված վարչարարության օրինականությունը, Օրենքի 8-րդ հոդվածով սահմանված վարչարարության համաչափությունը, Օրենքի 10-րդ հոդվածով սահմանված հավաստիության կանխավարկածը:

Հարկային տեսուչների կողմից ենթադրյալ իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը Օրենքի պահպանմամբ չիրականացնելու պարագայում խախտվել է նաև Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները: Նշված դրույթը ենթադրում է, որ վարչական մարմինը պարտավոր է տվյալ վարույթով ապահովել գործին առնչվող բոլոր փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և անաչառ քննարկումը գործի բոլոր, այդ թվում վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները բացահայտելու նպատակով: Ընդ որում, գործի բազմակողմանի քննարկումը վարչական մարմնի պարտականությունն է, հետևաբար այս սկզբունքի ապահովման նպատակով վարչական մարմինը վարույթի բազմակողմանիության ապահովման նպատակով ինքն է պարտավոր ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ, ձեռք բերել անհրաժեշտ տեղեկություններ: Մինչդեռ հարկային տեսուչների կողմից չիրականացնելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն չի ապահովվել նաև փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը:

Ընկերության ներկայացուցիչն իրացնելով վերը նշված հոդվածով սահմանված իր իրավունքներն արձանագրության մեջ կատարել է գրառում այն մային, որ խախտում թույլ չի տվել: Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերության համաձայն, վարչական վարույթ իրականացնող պաշտոնատար անձը պարտավոր էր ինքնուրույն, իր հաշվին ձեռնարկել միջոցներ՝ խախտում թույլ չտալու վերաբերյալ անձի ներկայացված տեղեկության իսկության մեջ հավաստիանալու համար, քանի որ նույն մասի 1-ին պարբերության համաձայն՝ վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացված տվյալները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի դրույթներով ընկերությունը խնդրում է ենթադրյալ իրավախախտման փաստը հիմնավորելու ուղղությամբ ձեռնարկել վարչական վարույթ: Միևնույն ժամանակ տեղեկացվում է, որ «Հ վարչական դատարանի վարույթում է գտնվում նույն հիմքով և նույն կողմերի միջև դատական վեճ, որի ավարտով կարող է

պարզաբանվել, թե օրինական է եղել արդյոք հարկային տեսուչների գործողությունները, թե ոչ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ընկերության տնօրենի և ստուգման ակտը կազմած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ բոլորը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Վանաձորի ՏՀՏ պետի 20.03.2013թ. թիվ 2114724 հանձնարարագրի ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում <Լիդեր Կարապետյան> ՍՊԸ-ում կատարվել է օրենքով սահմանված ելակետային տվյալների և գործակիցների ճշտության ստուգում: Մասնավորապես, վերոգրյալ հանձնարարագրի պահանջները կատարելու նպատակով դրանում ընդգրկված պաշտոնատար անձինք 27.03.2013թ-ին այցելել են ընկերության ք.Վանաձոր, Տիգրան Մեծի 34 հասցեում գործող հանրային սննդի օբյեկտ, որտեղ ներկա է գտնվել նաև ընկերության տնօրեն Ս.Կարապետյանը:

Ստուգմամբ արձանագրվել է, որ ընկերությունը հանրային սննդի գործունեությունն իրականացնում է 89 մ.ք. մակերեսով սպասարկման սրահի միջոցով: Ստուգմամբ արձանագրվել է նաև, որ ընկերությունում իրականացվում է հետտապարի կազմակերպման գործունեություն թվով երեք պարուհիների մասնակցությամբ:

Վերոգրյալ փաստերի վերաբերյալ 27.03.2013 թ-ին ստուգումն իրականացնող անձանց կողմից կազմվել է արձանագրություն, որն առանց առարկություններ ներկայացնելու ստորագրվել է նաև ընկերության տնօրենի և երեք պարուհիների կողմից:

Ստուգմամբ ձեռք բերված տվյալների և ընկերության կողմից հարկային տեսչություն ներկայացված հաշվետվություններում արտացոլված տեղեկությունների համադրման արդյունքները հիմք են հանդիսացել ստուգման ակտի կազմման և դրանով արտոնագրային վճարների գծով լրացուցիչ պարտավորությունների առաջադրման համար: Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է.

համաձայն 27.03.2013 թ-ին կազմված արձանագրության ք.Վանաձոր, Տիգրան Մեծի 34 հասցեում <Լիդեր Կարապետյան> ՍՊԸ-ն իրականացնում է հանրային սննդի սպասարկման գործունեություն 89 մ.ք. մակերեսով սպասարկման սրահում: Նշված օբյեկտում <Լիդեր Կարապետյան> ՍՊԸ-ի կողմից իրականացվում էր նաև հետտապար և անհատական կամ համույթային այլ ցուցադրումներ ունեցող գործունեություն: Սակայն, համաձայն <Արտոնագրային վճարների մասին> ՀՀ օրենքի 8-րդ հավելվածի 5-րդ կետի, ընկերության կողմից Վանաձորի ՏՀՏ է ներկայացվել արտոնագրային վճար վճարող համարվելու մասին հայտարարություն 2013 թ. հունվար, փետրվար և մարտ ամիսների համար 50 մ.ք. ելակետային տվյալի մեծությամբ, որում չի արտացոլվել հետտապար և անհատական կամ համույթային այլ ցուցադրումներ կազմակերպելու համար սահմանված 5,0 գործակիցը:

Խախտվել է <Արտոնագրային վճարների մասին> ՀՀ օրենքի թիվ 8 հավելվածի 9-րդ կետի և թիվ 8 հավելվածի 14-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները, համաձայն որի արտոնագրային վճարը պետք է հաշվարկվեր 1.687.500 դրամ (89 մ.ք. - 112500 X 3 ամիս X 5.0 գործակից), սակայն պակաս է ցույց տրվել 1.530.000 դրամ (1687500 - 52500 x 3 ամիս): Համաձայն <Արտոնագրային վճարների մասին> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ կետի, ենթակա է գանձման պետական բյուջե պակաս ցույց տրված արտոնագրային վճարը՝ 1.530.000 դրամը, ինչպես նաև տուգանք 50% չափով՝ 765000 դրամ:

Հիմք ընդունելով <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 23-րդ և 25-րդ հոդվածների դրույթներն արտոնագրային վճարների գծով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 2.576.520 դրամ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ ընկերությունում ստուգումը կատարվել է, ինչպես նաև ստուգման ակտով արտոնագրային վճարների գծով լրացուցիչ

պարտավորություններն առաջադրվել են ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

Հարկ է նշել նաև, որ Հանձնաժողովի 07.05.2013թ-ի նիստի քննարկման արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն ստուգման ակտը թողնվել է անփոփոխ:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի «Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին» N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, սույն գործի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ընդունված որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ (այսուհետ՝ Գանգատարկման խորհուրդ): Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է դրական եզրակացություն:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

Ստուգման ակտը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ